# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնք
գ. Դաշտավան, Գ.Տոնոյան Փ. 21, (0236) 6-39-80 dashtavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 19-Ա

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Քվեարկությամբ կողմ 7 դեմ 0 ձեռնպահ 0 արդյունքներով հաստատել օրակարգը.

1. ԴԱՇՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ԴԱՇՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 27-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ԴԱՇՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 28-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԲԱԲԱՅԱՆ ՀՈՎԻԿ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԳԵՍ ԽԱՆԱՂՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնք
գ. Դաշտավան, Գ.Տոնոյան Փ. 21, (0236) 6-39-80 dashtavan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 20-Ն

## ԴԱՇՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արարատի մարզի Դաշտավան համայնքի 2018 թվականի բյուջեի 1-1-2 Պահուստային ֆոնդ - 4891 հոդվածից պակասեցնել 450.0 /չորս հարյուր հիսուն հազար/ հազար դրամ

Ավելացնել՝

ա/ 09-2-2 Հանրակրթական ուսուցում - 4729 հոդվածին - 50.0 /հիսուն հազար/ հազար դրամ՝ համայնքի անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի գումար

բ/ 07-3-1 Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ - 4729 հոդվածին - 200.0 /երկու հարյուր հազար/ հազար դրամ՝ Անահիտ Խանաղյանի բուժման՝ քիմիոթերապևայի համար

գ/ 04-2-1 Գյուղատնտեսություն - 4111 հոդվածին 200.0 /երկու հարյուր հազար/ հազար դրամ՝ Դաշտավան համայնքի անասնաբույժի ծառայությունների դիմաց աշխատավարձ վճարելու նպատակով::

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԱՀԱԿ

2. ԲԱԲԱՅԱՆ ՀՈՎԻԿ

3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԳԵՍ ԽԱՆԱՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնք
գ. Դաշտավան, Գ.Տոնոյան Փ. 21, (0236) 6-39-80 dashtavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 22-Ն

## ԴԱՇՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 27-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, ավագանին որոշում է՝

1. Դաշտավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 30-ի, 2018 թվականին Դաշտավան համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասինե թիվ 27-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություն՝ 1. Աշխատակիցների քանակը << 13 >> թիվը փոխարինել <<14>> թվով, 2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերում կատարել լրացում նոր տողով՝ <<Անասնաբույժ>> հաստիք, հաստիքային միավոր <<0.5>> պաշտոնային դրույքաչափ <<50.0>> հազ. դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԲԱԲԱՅԱՆ ՀՈՎԻԿ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԳԵՍ ԽԱՆԱՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնք
գ. Դաշտավան, Գ.Տոնոյան Փ. 21, (0236) 6-39-80 dashtavan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 21-Ն

## ԴԱՇՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 28-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ և 38-րդ հոդվածների դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի դրույթներով և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 19-րդ կետի դրույթներով. *համայնքի ավագանին որոշում է՝*

Դաշտավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 28-Ն որոշման 3-րդ կետում կատարել լրացում նոր <<9-րդ>> ենթակետով.

9)սահմանել համայնքի տարածքում անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի ան անասնաբուժական ծառայությունների առաջարկվող ցանկը և գնացուցակը՝

ա. Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն 500 դրամ

բ. Ծննդօգնություն՝ թեթև միջամտություն 1000 դրամ՝,

- ծանր միջամտություն 5000 դրամ

գ. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)՝ մանր կենդանի 100 դրամ, խոշոր կենդանի 200 դրամ

դ. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ 200 դրամ

ե. Ախտահանություն՝ 1 քառ. մետր 200 դրամ

զ. Միջատազերծում (դեզինսեկցիա)՝ 1 քառ. մետր 100 դրամ

է. Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)՝ 1 քառ. մետր 100 դրամ

ը. Արհեստական սերմնավորում՝ 5000 դրամ

թ. Կենդանու հերձում մանր կենդանի՝ 1000 դրամ, խոշոր կենդանի 3000 դրամ

ժ. Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը 1000 դրամ

ի. Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից՝ մանր կենդանի 1000 դրամ, խոշոր կենդանի 2000 դրամ

լ. Կենդանիների հետսպանդային զննում (մինչև 2018 թվականի հուլիս ամիսը)՝ մանր կենդանի 1000 դրամ, խոշոր կենդանի 2000 դրամ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԲԱԲԱՅԱՆ ՀՈՎԻԿ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԳԵՍ ԽԱՆԱՂՅԱՆ